

Գ. Գ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ՄՈՒԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀՐԻԿԻ SYLVIA COMMUNIS LATHAM  
ԿԵՆՍԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ

Մոխրագույն շահրիկը մեր հանրապետությունում բնադրող չվող թռչուն է: Նա նախընտրում է նոսր թփուտներով ծածկված լուսավոր տարածքները, ուր բնադրման ու կերակրման համար կան համապատասխան պայմաններ [1, 2]: Համալսարանի ուսումնական բազայի շրջակայքում՝ Մաղկոնյաց լեռների հյուսիսային լանջերից մեկում, ընտրված է 10 հա տարածությամբ ստացիոնար, որի բարձրությունը ծովի մակերևույթից 1750—1800 մ է:

Ստացիոնարը գտնվում է անտառի բացատում, որտեղ կան իրարից շատ թե քիչ հեռու ընկած թփուտներ, և տեղանքը լուսավոր է:

Մոխրագույն շահրիկի գարնանային առաջին վերադարձը նշված է մայիսի առաջին տասնօրյակին, իսկ աշնան չուն վերջանում է սեպտեմբերին:

Մայիսի երկրորդ տասնօրյակից լսվում է առանձին արունների հաճելի երգը, դա վկայում է, որ որոշ անհատներ պատրաստ են զուգընտրության: Մայիսի երրորդ տասնօրյակից մինչև հունիսի վերջը հատկապես օրվա առաջին կեսին և մայրամուտից առաջ երգում են ակտիվորեն և զույգ փնտրում: Բազմացումը տեղի է բռնում մայիսի վերջերից մինչև հուլիսի կեսերը:

Բնադրման տեղը ընտրում է արուն և այրտեղից ոչ հեռու վեր ու վար թռչելով կամ բարձր ճյուղերին կանգնած դայլայլում է մինչև կմտենա էգը: Զուգավորման արարողությունը տեղի է ունենում ճյուղերի միջև:

Արու թռչունը էգին հետապնդելով, վեր ու վար թռչելով, ակտիվ երգելով հետևում է նրան: Քսանհինգ զույգերի ուսումնասիրությունից պարզվել է, որ մեծ մասը (17 զույգը) սկսել են բույն կառուցել զույգ կազմելու երկրորդ օրը, 5 զույգ՝ հենց առաջին օրվա վերջին, իսկ 3 զույգ՝ երրորդ օրվանից:

Բույնը կառուցում են որևէ խիտ թփի կամ հաստ ցողուններ ունեցող խիտ, լավ քողարկված խոտաբույսերի հիմքում, գետնից 3—4 սմ բարձր:

Բույնը գրեթե աննկատ է, պնակաձև, նրա շափերն են (30 բների միջինը). ընդհանուր տրամագիծը 100 մմ, ներսի տրամագիծը 65 մմ, ընդհանուր բարձրությունը 60 մմ, ներսի բարձրությունը 30 մմ:

Բույնը կառուցելուց անմիջապես հետո սկսվում է ձվադրումը: Մոխրագույն շահրիկը դնում է 4—6 ձու: Ուսումնասիրված 25 բներից 15 բնում եղել է 4 ձու, 6-ում՝ 6 ձու, իսկ 4-ում՝ 5:

Զվերի (116) միջին չափերն են  $13,5 \times 18,2$  մմ: Հանդիպում են նաև  $12 \times 16$  մմ-ից մինչև  $16 \times 20$  մմ մեծության ձվեր: Զվի ընդհանուր ֆոնը բաց կաթնագույն է, դարչնագույն բծավորությամբ, որոնք բուրձի ծայրում ավելի խտանում են: Զվերի զանգվածը՝ 1,5—2,5 գ է:

Էգը թխսում է վերջին ձուն դնելուց հետո՝ 11—12 օր: Այդ շրջանում արուն բնի շրջակայքից չի հեռանում, սակայն չի էլ մոտենում բնին: Էգը օրա-

կան 5—6 անգամ 1—2 ռուպեով բացակայում է բնից վերակրվելու նպատակով:

Վերջին ձուն դնելուց հետո 12-րդ օրը դուրս են գալիս ձագերը ամբողջովին մերկ: Մեկ օրական ձագերի միջին զանգվածը (50-ից) կազմում է 1—2,5 գ: Ձագերի ականջի ծալքը և աչքերը բացվում են նրանց կյանքի 3—4 օրը: Զորորդ օրը լսվ նկատելի են պտերիլիաները:

Հինգերորդ օրը գրեթե բոլոր պտերիալիաներում կրկնում են մատղաշ փետուրների ծայրերը, բացի գլխային մասից, ուր փետուրները նկատվում են միայն 6-րդ օրը: 7—8-րդ օրերին գրեթե բոլոր փետուրները դառնում են վրձնաձև: 10-րդ օրը փետուրները այնքան են աճում, որ ծածկում են նաև ապտերիլիաները: Ակսած 10-րդ օրից ձագերը ունեն նուրբ փետրավորություն, թիկունքի մասում նրանք ինչ-որ չափով բաց դարչնագույն են, կողքերից բաց ժանգագույն, իսկ ներքևից ծղոտադեղնավուն: Ձագերի մարմնի զանգվածը թռիչքի նախօրյակին հասնում է 11—12 գ, իսկ երկարությունը 65—72 մմ:

Հետսաղմնային կյանքի 10-րդ օրը ձագերը դուրս են գալիս բնից ու կանգնում են թփերի ճյուղերին, ապա նորից վերագտնում բույն: Վտանգի դեպքում նրանք կծկվում ու թաքնվում են բնի շրջակայքում թփերի տակ կամ խոտերի արանքում: Հետսնային շրջանում 7—12 օր ծնողները շարունակում են կերակրել ու խնամել ձագերին, որոնք այնուհետև աստիճանաբար անցնում են փնջնուրույն կյանքի ու կազմում փոքրիկ խմբեր մինչև չվելը: Մեկ ժամում շահրիկը ձագերի համար կեր է բերում 14—15 անգամ, այսինքն՝ կատարում է նվազագույնը՝ օրական 200 կերային թռիչք:

Պարզվել է, որ մոխրագույն շահրիկը զգալի չափով տուժում է խոտհարքից, որից հետո գիշատիչներին նկատելի են դառնում շահրիկների այն բները, որոնք դրված են թփերի հիմքում:

Ցանկալի է հասնել այն բանին, որպեսզի անտառների բացատներում խոտհունձը արգելվի, ծայրահեղ դեպքում այն իրագործվի ու ժամկետներում, երբ նրանց ձագերը հեռացած կլինեն բներից:

Ամեն տարի խոտհնձի պատճառով տուժում են բների 75—90 %-ը: Այսպես՝ 1978 թ. ոչնչացել են 70 %-ը, 1979 թ. 72 %, 1981 թ. 85 %-ը, իսկ 1982 թ. 90 %-ը:

Մոխրագույն շահրիկը չվում է սկսած օգոստոսի երկրորդ կեսից՝ փոքր խմբերով:

Կենդանաբանության  
ամբիոն

Մտացվել է 9.04.1983

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Даль С. К. Животный мир Арм. ССР. Изд. АН Арм. ССР, 1954.
2. Мальчевский А. С. Гнездовая жизнь певчих птиц. Изд. ЛГУ, 1959.

Գ. Գ. ՄԱՆՈՒՇԱՐՅԱՆ

### Օ ԲԻՈԼՈԳԻԻ ՍԵՐՈՅ ՏԼԱՎԿԻ SYLVIA COMMUNIS LATHAM В АРМ. ССР

#### Резюме

Серая славка предпочитает покрытые негустыми кустарниками местности, где много света и легко кормиться. Такой местностью был наш стационар на северных склонах Цахкуняц.

Серая славка прилетает в стационар в начале мая и остается здесь до сентября, где имеет фоновый характер.

Период массового размножения—с конца мая до второй декады июня. Гнездо строит она под кустарниками или жесткими (крепкими) травянистыми растениями на высоте 3—4 см от поверхности земли.

В кладке серой славки обычно бывает 4—6 яиц.

Высиживание длится 11—12 дней, столько же в постэмбриональный период птенцы остаются в гнезде.

Серые славки кормят своих птенцов различными личинками и мелкими насекомыми, в среднем в течение одного часа—14—15 раз, что, в свою очередь, приносит огромную пользу лесу.

Выяснена, что серым славкам, гнездящимся в гуще травянистых растений, очень вредит сенокос, особенно преждевременный. После сенокоса обнажаются и становятся более доступными для различных хищников их гнездилища, в связи с чем нарушается общий биоценоз.